Ազգ
Azg

24 ՍԵՊՏԵՄԲԵՐ 2005 ՇԱԲԱԹ 171 (3337)

# ԵՄ-ը Թուրքիայից պահանջում է բացել Հայաստանի հետ սահմանը

Եվրամիությունը Թուրքիայից պահանջում է Հայաստանի հետ սահմանի բացումը, ինչպես նաեւ ազգային փոքրամասնությունների պայմանների բարելավումը: Վկայակոչելով թուրքական լրատվամիջոցներ, «Թրենդ» գործակալությունը հաղորդում է, որ նման հայտարարությամբ հանդես է եկել Եվրախորհրդարանի «Կանաչներ» խմբակցության անդամ, ազգությամբ թուրք Ջեմ Օզդեմիրը՝ մեկնաբանելով Եվրախորհրդարանի դիրքորոշումը ԵՄ-ին Թուրքիայի անդամակցության բանակցությունները սկսելու հարցում: Օզդեմիրը նշել է, որ հարցը քննարկվելու է սեպտեմբերի 28-ին եւ արձանագրության տեքստում ներառված է հոդված, ըստ որի «Անկարային անհրաժեշտ է Հայաստանի հետ սահմանը բացելու որոշում կայացնել»:

# 20 մլն դոլարով 18 դպրոց են վերանորոգում

## «Լինսի» հիմնադրամից եւս 40 մլն դոլար տրամադրվում է ճանապարհաշինությանը

ԹԱԹՈՒԼ ՀԱԿՈԲՅԱՆ

«Լինսի» հիմնադրամը Հայաստանում սկսում է նոր ծրագիր՝ 60 մլն դոլար ընդհանուր արժողությամբ: Դեռ այս տարվա հուլիսի սկզբներին հիմնադրամը տարածել էր հաղորդագրություն, ըստ որի գումարներն ուղղվելու էին դպրոցների վերակառուցմանը, Երեւանի փողոցների բարելավմանը, Հայաստանի ճանապարհների նորոգմանը: Երեկ Հայաստանի նախագահի աշխատակազմի ղեկավար Արտաշես Թումանյանը մանրամասներ ներկայացրեց լրագրողներին:




Նախ ամենազարմանալին եւ անհավանական թվացողը: Պարզվում է, որ «Լինսի» հիմնադրամից տրամադրվելիք 20 մլն դոլարն ուղղվելու է 18 դպրոցների վերանորոգմանը: Լրագրողների մի մասը մինչեւ վերջ էլ չհասկացավ, թե ինչպես են դպրոցները վերանորոգվելու, որ դրանցից յուրաքանչյուրի վրա ծախսվի 1 մլն 250 հազար դոլար: Պրն Թումանյանը, սովորության համաձայն, շատ հանգիստ էր խոսում, բացատրում, որ այդ դպրոցները՝ 13-ը Երեւանում եւ 5-ը մարզերում, համապատասխանելու են ժամանակակից բոլոր պահանջներին: Բացի այդ, Թումանյանը հիշեցրեց, որ նախորդ տարիներին «Լինսի» հիմնադրամը տրամադրել է 150 մլն դոլար, մեր հայրենակից, բարերար Քըրք Քըրքորյանը եկել, տեսել է կատարված աշխատանքները եւ հավանել: Իսկ ապացույցներից մեկը ծրագրերի շարունակականությունն է՝ առաջիկա երկու տարում 60 մլն դոլար:

Տես էջ 2

# ԿԱՐԱԲԱՂՅԱՆ ՀԱՐՑ

# Մինսկի խումբը պատրաստ է տալ իր լիազորությունների մի մասը ԵԽ ԽՎ-ին

ԵԱՀԿ Մինսկի խումբը եւ ԵԽ ԽՎ ԼՂ հարցով հատուկ կոմիտեն կարող են համագործակցել, հայտարարել է ռուսաստանցի միջնորդ Յուրի Մերզլյակովը: Ըստ «Մեդիամաքսի», Մերզլյակովը նման կարծիք է հայտնել՝ մեկնաբանելով սեպտեմբերի 12-ին Փարիզում ԵԽ ԽՎ հատուկ կոմիտեի շրջանակներում կայացած ԼՂ վերաբերյալ լսումները:

Մինսկի խումբը զբաղվում է միջնորդությամբ, ներկայացնում առաջարկություններ, իսկ ԵԽ ԽՎ-ն կարող է ներդրում ունենալ երկու երկրներում հասարակական կարծիքի ձեւավորման գործում՝ կարգավորմանը հասնելու անհրաժեշտ փոխզիջումը գտնելու համար: ԵԽ ԽՎ-ն կարող է նաեւ ակտիվ լինել ԵԽ-ին անդամակցելիս Հայաստանի եւ Ադրբեջանի ստանձնած պարտավորությունների կատարման հարցերում, որոնցից կարեւորագույնը ԼՂ հակամարտությունը բացառապես խաղաղ միջոցներով լուծելու պարտավորությունն է, ասել է ռուս դիվանագետը:

Մերզլյակովի կարծիքով, ԵԽ-ն եւ նրա խորհրդարանական վեհաժողովը կարող են իրենց վրա վերցնել հակամարտության գոտու զինադադարի ռեժիմի խախտման յուրաքանչյուր դեպքի վերահսկողությունը եւ ազդել կողմերի վրա, որ նրանք հետեւեն ստանձնած պարտավորություններին: «Երկու կողմերից երբեւէ ինչ-որ հակամարտությունը ռազմական ճանապարհով լուծելու ռազմատենչ հայտարարությունները եւ կոչերը, իհարկե, չեն նպաստում կարգավորման գործին: Մենք պատրաստ ենք կիսել լիազորությունների մի մասը ԵԽ ԽՎ-ի հետ, որպեսզի նման հայտարարություններ չլինեն», ասել է նա:

Միջնորդներին, ըստ Մերզլյակովի, «մտահոգում է նաեւ երկու երկրների ռազմական բյուջեների վերջերս արձանագրած աճը, որը որեւէ փուլում կարող է ազդել հակամարտությունը բացառապես խաղաղ միջոցներով լուծելու պարտավորության կատարման վրա»: «Բնականաբար, ազգային բյուջեի չափերը որոշելը ամեն մի կառավարության առանձնաշնորհն է, սակայն եթե թողնենք այդ հարցն առանց ԵԽ վերահսկողության, ծախսերը կարող են հասնել այնպիսի կրիտիկական չափի, երբ խոսքը կգնա կողմերի՝ հակամարտության ռազմական լուծմանը նախապատրաստվելու ակնհայտ մտադրության մասին», ասել է Մերզլյակովը:

Հիշեցնենք, որ վերջին տարիներին Ադրբեջանը հետեւողականորեն ավելացնում է ռազմական ծախսերը: Պաշտոնական Բաքուն Իլհամ Ալիեւի շուրթերով հայտարարում է, որ մեկ-երկու տարի հետո Ադրբեջանի ռազմական բյուջեն կհավասարվի Հայաստանի ընդհանուր բյուջեին:

# Երեւան կժամանի Ֆինլանդիայի նախագահ Տարյա Հալոնենը

Նախագահ Ռոբերտ Քոչարյանի հրավերով սեպտեմբերի 26-28-ը պաշտոնական այցով Հայաստանում կլինի Ֆինլանդիայի Հանրապետության նախագահ տիկին Տարյա Հալոնենը ամուսնու՝ Պենտտի Արաջարվիի հետ: Այցը կրելու է տարածաշրջանային բնույթ (Հայաստան, Վրաստան, Ադրբեջան), տեղեկացնում է ՀՀ նախագահի մամլո գրասենյակը:




Այցի հիմնական նպատակն է խթանել միջպետական կապերի զարգացումը, խորացնել համագործակցությունը երկու երկրների միջեւ, ուրվագծել տնտեսական փոխգործակցության հեռանկարները:

Սեպտեմբերի 27-ին ՀՀ նախագահի նստավայրում բարձրաստիճան հյուրի դիմավորման պաշտոնական արարողությունից հետո տեղի կունենա Ռոբերտ Քոչարյանի եւ Տարյա Հալոնենի առանձնազրույցը, որից հետո բանակցությունները կշարունակվեն ընդլայնված կազմով: Այնուհետեւ նախագահները հանդես կգան համատեղ մամուլի ասուլիսով:

# Թուրք-ամերիկյան հարաբերությունները վտանգի տակ են

Թուրքիայի հարաբերությունները Մ. Նահանգների հետ թերեւս անկանխատեսելի աստիճանի վատանան, եթե Մ. Նահանգների Ներկայացուցիչների պալատը հավանության արժանացնի Հայոց ցեղասպանության երկու բանաձեւերը, որոնք անցյալ շաբաթ ընդունվել էին միջազգային հարաբերությունների հանձնաժողովում: «Թրքիշ դեյլի նյուզ» անգլիատառ օրաթերթում նման տեղեկություն է հաղորդել մի թուրք դիվանագետ, որի անունը թերթը չի նշում: Անկարայում լույս տեսնող թերթը նաեւ հիշեցնում է, որ չնայած նախագահ Բուշի վարչակազմը զգուշացրել էր կոնգրեսականներին, որ երկու բանաձեւերի ընդունումը կվնասի թուրք-ամերիկյան հարաբերություններին, «հանձնաժողովն անցյալ դարասկզբի հայերի սպանությունները որակել էր ցեղասպանություն»:

# Ովքե՞ր են ձեւավորելու մեր ավագանիները

## Նրանց մեծ մասն ապահովված մարդիկ են, առավելապես՝ խանութպաններ

ՄԱՐԻՆԵ ԽԱՉԱՏՐՅԱՆ

**Կենտրոն եւ Արաբկիր համայնքներում կիրակի կկայանան ավագանու եւ համայնքապետի ընտրություններ, իսկ Ավան, Դավիթաշեն, Մալաթիա-Սեբաստիա, Շենգավիթ եւ Աջափնյակ թաղամասերում բնակիչները կընտրեն միայն ավագանի:**

Տեղական ինքնակառավարման մարմինների հովհարաձեւ ընտրությունները հնարավորություն են տալիս նկատելու բաներ, որոնք համատարած ընտրությունների դեպքում երեւի երբեւէ աննկատ են մնում: Ընտրության կազմակերպիչներն այդպիսով իրենց ապահովագրել են արտասահմանյան եւ տեղական դիտորդներից՝ ով գլուխ կդնի մեկ-երկու համայնքի ընտրությունների դիտարկմամբ զբաղվելու համար ժամանել Հայաստան (բացառությունները՝ հեչ): Մենք ու մենք ենք, ոնց ուզենք՝ այնպես էլ ընտրություն կանցկացնենք: Բայց մի կարեւոր հանգամանք հաշվի չի առնվել՝ ինչպես որ առաջին խումբ ընտրություններից հետո կեղծողներն են հմտանում, այնպես էլ նոր ընտրության գնացողները հմտանում են կեղծումների դեմ պաշտպանվելիս: Այնպես որ՝ այս կիրակի, տեղական ինքնակառավարման մարմինների երկրորդ խումբ ընտրություններին կողմերն արդեն ավելի փորձառություն ձեռք բերած են մասնակցելու՝ բարդացնելով կեղծել պատրաստվողների գործը:

Տես էջ 3

# Վերստին հետաձգվեց «Օսմանյան հայերը կայսրության անկման շրջանում» թեմայով գիտաժողովը

## Մինչդեռ վարչապետ Էրդողանը խնդրել էր, որ գիտաժողովը տեղի ունենա

ՀԱԿՈԲ ՉԱՔՐՅԱՆ

Այս գիտաժողովը նախատեսվում էր հրավիրել դեռեւս մայիսի 25-27-ը պետական կարգավիճակ ունեցող «Բոսֆորի» համալսարանում: Սակայն գիտաժողովի գումարումից մեկ օր առաջ՝ մայիսի 24-ին Թուրքիայի ազգային մեծ ժողովում ընդդիմադիր եւ իշխող կուսակցությունների երկու պատգամավոր «դավաճանության» մեջ էին մեղադրել կազմակերպիչներին, որոնց միացել էր նաեւ արդարադատության նախարարը: Մեղադրանքները այլ ելք չէին թողել «Բոսֆորի» համալսարանի ռեկտորատին, քան հետաձգել գումարումը:

Գիտաժողովի հետաձգումը լայն արձագանք էր գտել ինչպես Թուրքիայում, այնպես էլ երկրի սահմաններից դուրս: Եթե թուրքական արձագանքները միանշանակ չէին, ապա արեւմտյան արձագանքներում հենց դատապարտվում էր Թուրքիան, որին էլ երկրի վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանն ու Մեջլիսի նախագահ Բյուլենթ Արընչն արտահայտվեցին գիտաժողովի հրավիրման օգտին:

Ըստ երեւույթին արեւմտյան արձագանքների տպավորության տակ վարչապետ Էրդողանն անձամբ դիմել էր «Բոսֆորի» համալսարանի ռեկտոր տկն Այշե Սոյսալին եւ խնդրել, որ հետաձգված գիտաժողովը հրավիրվի մինչեւ Եվրամիության հետ անդամակցության բանակցությունների մեկնարկումը, այսինքն՝ հոկտեմբերի 3-ը:

Ռեկտորատն, ընդառաջելով վարչապետին, դեռեւս օգոստոսի 21-ին հայտարարել էր հետաձգված «Օսմանյան հայերը կայսրության անկման շրջանում. գիտական պատասխանատվություն եւ ժողովրդավարության խնդիրներ» թեմայով գիտաժողովը սեպտեմբերի 23-25-ը հրավիրելու մասին: Ավելին, որպես մասնակից գիտաժողովին հրավիրված արտգործնախարար Աբդուլլահ Գյուլն ընդունել էր հրավերը:

Չնայած ազգայնամոլ շրջանակների գիտաժողովը վերստին տապալելու սպառնալիքներին, վարչապետ Էրդողանի վերոհիշյալ խնդրանքն ու արտգործնախարարի դրական վերաբերմունքը հրավերին որեւէ կասկած չէին թողնում, որ միջոցառումն այս անգամ անպայման կանցկացվի: Սակայն ձախողվեց նաեւ գիտաժողովը հրավիրելու երկրորդ նախաձեռնությունը, ընդ որում՝ սեպտեմբերի 22-ին, այսինքն՝ մեկ օր առաջ, ինչպես առաջին նախաձեռնությունն էր ձախողվել:

Տես էջ 5

